Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Հրազդան կիրճի բարեկարգման և մետաղական պատնեշի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29.07.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Ղալումյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/63 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հուլիսի 29-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/63 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

h/h	Մասնակցի անվանումը
1	«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային արժեքը	Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը
1	Երևան քաղաքի Հրազդան կիրճի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	30000	29000
2	Երևան քաղաքի Հրազդան կիրճի մետաղական պատնեշի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	30000	29000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները.

- «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները և մասնակցին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ) սահմանվում է **42**:

6. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ **«ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/63»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

6.2 Օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցին կներկայացվի **Երևան քաղաքի Հրազդան կիրճի բարեկարգման և մետաղական պատնեշի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:**

6.3 Հաշվի առնելով, որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Ղալումյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան